

ՌԱՇՏՈՆԱԹԵՐԹ՝ ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ՝ ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Լուրեր Սփիւռքէն

Պէրուօ, Լիբանան

ԱՄԵՆԱՊԱՏԻԻ ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԷՆ ԴՈԿՏ. ՍՀԵՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Ամենապատիւ Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Կաթողիկոս Պատրիարքը, երեքշաբթի 6 մայիս 2014 երեկոյեան ժամը 6-ին, Հայ Կաթողիկէ Պատրիարքարանին մէջ ընդունեց Երեւանի Պետական համալսարանի հայագիտական հետազոտութեան ինստիտուտի փոխ տնօրէն՝ դոկտ. Միւր Յովհաննիսեանը: Հանդիպումին ներկայ էին Հ.Հ. դեսպանութեան Ա. քարտուղար՝ պր. Վարդան Աղամեան, հայ կաթողիկէ դպրոցներու տնօրէններու խորհուրդի նախագահ՝ գերյարգելի հայր Գեորգ Ծ.Վ. Եղիայեան, Սուրբ Գրիգոր Նարեկացի կեդրոնի տնօրէն՝ հայր Վարդան վրդ. Գազանճեան, հայ կաթողիկէ Մեսրոպեան բարձրագոյն վարժարանի տնօրէն՝ պր. Կրէկուար Գալուստ եւ Մեսրոպեան վարժարանի արտադասարանային ծրագիրներու եւ հայագիտական բաժնի պատասխանատու՝ պր. Ռաֆֆի Տէմիրճեան:

Շուրջ մէկ ժամ տեւած հանդիպումի ընթացքին արծարծուեցան Լիբանանի հայ կրթական համակարգերուն մէջ հայագիտական նիւթերու առաջատար իրականացման եւ ընդլայնման ծրագրին, ի մասնաւորի հայոց



պատմութեան դասաւանդման մեթոտարանութեան հետ կապուած հարցերը, համապատասխան պատմութեան դասագիրքի եւ յառաջիկային այս ուղղութեամբ առնուելիք քայլերը:

Դոկտ. Մհեր Յովհաննիսեան Լիբանան ժամանած է Մեսրոպեան բարձրագոյն վարժարանի հրաւերով Երեւանի Պետական համալսարանի եւ Մեսրոպեանի միջեւ համագործակցութեան պայմանագիր մը կնքելու: Հարկ է յիշել նաեւ, որ դոկտ. Մհեր Յովհաննէսեանը սկիզբ տուած է www.armin.am կայքին, ինչպէս նաեւ հիմնադիրն է եւ ռահվիրան Հ.Հ. Երեւանի Պետական համալսարանի հայագիտական հետազոտութիւններու ցեղասպանագիտութեան մագիստրոսական ծրագիրին:

Հանդիպումի աւարտին Հոգեւոր Տէրը ջերմօրէն ողջունեց եւ բարձր գնահատեց կրթութեան բնագաւառին մէջ Երեւանի Պետական համալսարանին եւ հայ կաթողիկէ Մեսրոպեան բարձրագոյն վարժարանին միջեւ կրթական համագործակցութիւնը, մաղթելով որ սփիւռքի բոլոր հայկական կրթական հաստատութիւնները հետեւին այս օրինակին:

Նշենք թէ, Մհեր Յովհաննիսեան Լիբանան ժամանած էր Մեսրոպեան բարձրագոյն վարժարանի հրաւերով Երեւանի Պետական համալսարանի եւ Մեսրոպեանի միջեւ համագործակցութեան պայմանագիր մը կնքելու: Հարկ է յիշել նաեւ, որ դոկտ. Մհեր Յովհաննէսեանը սկիզբ տուած է www.armin.am կայքին, ինչպէս նաեւ հիմնադիրն է եւ ռահվիրան Հ.Հ. Երեւանի Պետական համալսարանի հայագիտական հետազոտութիւններու ցեղասպանագիտութեան մագիստրոսական ծրագիրին:



ԾԱՆՕԹ՝

Հայկական այն միութիւններն ու վարժարանները, որոնք կը փափաքին իրենց թղթակցութիւնները հրատարակուած տեսնել ՌԱԿ ՄԱՍՈՒԼ-ին մէջ, բարեհաճին իրենց գրութիւնները՝ նկարներով մէկտեղ, ուղղել խմբագրութեանս հետեւեալ հասցէին՝ ragmamoul@gmail.com